ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 419 - Ա **26 սեպտեմբերի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 237 – Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հուլիսի 17-ի N 136 – Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 237–Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ստեղծել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով հետևյալ կազմով՝

Խլղաթյան Սևակ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, նախագահ
Աղեկյան Ալբերտ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Բաղալյան Գարիկ	- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Գրիգորյան Վաչագան	- մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Ղուկասյան Վերգինե	- մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
Շահբազյան Հասմիկ	- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Ղազարյան Նորիկ	- մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ